Արդ, Թալինը մինչեւ Է. դարի կէսերը չէր կարող առանց եկեղեցու լինել, գերեզմանական կոթողների ստուար մնացորդներն որ ունինք այստեղ, ամէն տեղ կապուած տեսանք բազիլիկ եկեղեցիների գոյութեան հետ, որոնց ապացոյց պիտի համարել: Նրանք գտնւում են այժմ մեծ եկեղեցու մօտ, բայց բերուած են գիւղացիների կողմից եւ իբրեւ շիրմաքար գործածուած իրենց ննջեցեալների վերայ մերձակայ մի վայրից, որի հետքերը, տարաբաղդաբար գտնել չկարողացանք, սրբուած լինելով կամ այգիների տակ քը, ձախ ձեռքը վեր բարձրացրած, որպէս նշան պաշտաման կամ երկրպագութեան, Adoration, ինչպէս կը տեսնենք աւետման կամ Աստուածածնի պատկերագրութիւնների մէջ եւս. ուրեմն սովորական այս ժամանակի քանդակուած պատկերագրութեան մէջ:

Վերեւի պատկերը ձախ ձեռքին աւետարան ունի բռնած, իսկ աջը ցած է ձգել. ունի լուսոյ պսակ բոլորակ, հագուստն էլ նման Օձունի առաքելոց հագուստին, մինչեւ ծունկները հասնող պարեգօտ, իսկ ձախ ուսի վերայից վերնազգեստը ձգած, ծածկում է կուրծքը, միւս փէշը իջնում է ծնկներից

Պատկ. 65

ծածկուած:

Այդ կոթողներից մէկն է Պատկեր 38 խոզագլուխ մարդկային Ֆիգուրով, որ համեմատեցինք Օձունի նոյնանման երեւոյթի հետ. եւ նոյնը տեսանք նոյն տեղի ուրիշ կոթողների վերայ (Պատկ. 39, 40, 41), վերջինը կին: Սրանցից առաջին երկուսի վերին Ֆիգուրը սուրբի պատկեր է, որ նոյն երեւոյթի գրական բովանդակութիւնն ի նկատի ունենալով, պէտք է նոյնացնենք Գրիգոր Լուսաւորչի հետ. խոզագլուխը՝ այսինքն Տրդատ՝ համբուրում է Ս. Լուսաւորչի ոտէլ ցած, բայց ոչ պարեգօտի երկարութեան: Յատկանշական է պարեգօտի և թիկնոցի խիտ առ խիտ ծալքերը, որ սիրիական ազդեցութիւն կրող քանդակներին է յատուկ: Սուրբի ձեռքին կազմած գիրքը, փոխանակ գալարուն մագաղաթի, չպէտք է մեզ վարանէ քանդակի ծագումը չորրորդ եւ հինգերորդ դարը տանել, որովհետեւ կազմի ծագումը շատ աւելի հին է. չորրորդ դարից ունինք քրիստոնէական քանդակներ* եւ հինգերորդ դարից արդէն ս. գիրք կազմով, Codex

*Burckhart. Die Zeit Constantins des Grossen. պատկ. 90. 91.;